ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
ДОКЛАДЫ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ REPORTS
Հատոր Том Volume 102 2002 № 2

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիկոս Գ. Ա. Գալոյան

Թե ինչպես էին ադրբեջանցիները ծրագրում «գնել Ղարաբաղի բոլոր հողերը»

(Ներկայացված է 15/V 2002)

Ռուսական առաջին հեղափոխությունը, ռուս-ճապոնական պատերազմում ցարիզմի կրած պարտությունը, 1905-1906 թթ. Հայ-ադրբեջանական կոտորածները Բաքվում զգալիորեն թուլացրել և խոցելի էին դարձրել Ռուսաստանի միջազգային դիրքերը: Ինչպես նախորդ դարերում, այս անգամ էլ Թուրքիան փորձեց օգտվել իրավիճակից և իր «դարավոր թշնամուց», ինչպիսին Ռուսաստանին դիտում էր Աբդուլ Համիդ 2-րդը, վրեժ լուծել և դուրս մղել ռուսներին Կովկասից: Ռուս-թուրքական հակամարտությունների սրումը 1907 թ. սպառնում էր նրանց միջև պատերազմի սանձազերծմամբ: Ռուսաստանի բանակի գլխավոր շտաբում ստացված հաղորդագրությունում նշվում էր, որ «Թուրքիան ուժեղ թափով նախապատրաստվում էր պատերազմի ... Ռուսաստանի դեմ» (ЦГАОР СССР (Москва), ф. ДП, ОО, 102, оп. 1910 г, ед. хр. 14, л. 90): Խիստ կերպով նկատելի դարձավ թուրքական զորքերի կուտակումը ռուսական սահմանների մոտ և նրանց գործակալների ակտիվացումը Կովկասում, որոնք հող էին հարթում այնտեղ Թուրքիայի ներխուժման համար: Այդ նպատակին ծառայող կազմակերպություններին հովանավորում և սատարում էին ինչպես սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը, այնպես և իշխանության ձգտող երիտթուրքերը:

Կովկասում ստեղծվում էին հակառուսական և հակահայկական տարբեր անվանումների տակ գործող մուսուլմանական կազմակերպություններ: Առավել ռեակցիոն և ագրեսիվ այդպիսի կազմակերպություններից էր թուրքական գործակալների նախաձեռնությամբ 1906 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Բաքվի և Ելիսավետպոլի նահանգներում ստեղծված «Կովկասյան համամուսուլմանական «Դիֆայի»» («Պաշտպան») միությունը:

Պանիսլամիստների կողմից այդ կուսակցությունը ստեղծվել էր Բաքվում ծայր առած հայերի կոտորածներին կազմակերպված բնույթ հաղորդելու, Ղարաբաղը հայաթափ անելու, այն «մուսուլմանական պրովինցիայի» և Ռուսաստանի դեմ կովկասյան մուսուլմանների ահաբեկչական պայքարի օջախի վերածելու համար: Այսպիսով, Կովկասում ստեղծվում էր հակառուսական-հակահայկական կազմակերպված ահաբեկ-

չական կենտրոն, որը քաղաքական պայքարին կրոնական երանգ էր հաղորդել՝ մուսուլմանական խավար զանգվածներին իր հետևից տանելու համար: Նրա առաջին «գործը» եղավ հայ-թուրքական կոտորածների ժամանակ Ղարաբաղի տասնյակ ու հարյուրավոր հայերի սպանությունների կազմակերպումը:

Ռուսական արխիվներից մեկում մեր կողմից հայտնաբերվել է ասվածը հաստատող մի հետաքրքիր փաստաթուղթ՝ «Կովկասյան համամուսուլմանական «Դիֆայի» միության» մասին խորագրով, որը կազմել էր ցարական պահանորդական բաժինը և 1909 թ. օգոստոսին հասցեագրել Ոստիկանական դեպարտամենտի տնօրեն Ն. Պ. Զուբովին:

Փաստաթուղթը վկայում էր, որ նեղազգայնական «Դիֆայի» կուսակցությունը ձգտել է նախ և առաջ «զերծ պահել մուսուլմանների ինքնակայունությունը հայերի ազդեցությունից և ռուսիֆիկացման վտանգից»: Նշված նպատակին հասնելու միջոցներ են համարվել «լուսավորությունը և ուժը», ընդորում «ուժ ասելով հասկանում են ահաբեկչությունը և կուսակցության ռազմա-մարտական կազմակերպությունը»: Այդ կազմակերպության առաջին հակառուսական ահաբեկչությունը Ղարաբաղի գեներալ-նահանգապետ նշանակված Գոլոշչապովի դեմ 1906 թ. նոյեմբերի 8-ին Թիֆլիսում կազմակերպած մահափորձն էր: Այդ կապակցությամբ «Դիֆայի» հրապարակած թռուցիկում նշվում էր, որ ««Դիֆայի» կուսակցությունը գեներալ Գոլոշչապովին դատապարտել է մահվան՝ Ղարաբաղում կատարած չարագործությունների համար»: Նկատի էր առնվել հայ-ադրբեջանական կոտորածների ժամանակ Գոլոշչապովի գրաված կոշտ դիրքը մուսուլման ահաբեկիչների նկատմամբ: «Դիֆայիի» թռուցիկում հիշատակվում էին նաև այլ անուններ, որոնց դեմ ևս նախապատրաստվում էր ահաբեկչություն: Ցարական պահանորդական բաժնում արձանագրվել է, որ «իրոք այդ սպառնալիքները շուտով ի կատար են ածվել (ЦГАОР, ф. ДП, ОО, 102, оп. 1909 г, ед. хр. 14, л. 35)):

1907 թ. մարտին այդ կուսակցությունը Ելիսավետպոլում հրավիրել էր Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի և Ղրիմի մուսուլմանական բնակչության ներկայացուցիչների համագումար՝ կուսակցության տակտիկական և ծրագրային հարցերը մշակելու համար:

Համագումարում որոշում է կայացվել. «(1) մոտ ապագայում Ղրիմում հրավիրել համագումար (Համառուսաստանյան) մուսուլմանական միություն ստեղծելու համար»: Պրակտիկ խնդիր է համարվել «ահաբեկչությունների միջոցով հասնել զիջումների կառավարությունից»: «(2) 1907 թ. գարնանից Ղարաբաղում (Շուշիի գավառում) «խմբերին» (դաշնակցական - Գ. Գ.) հակադրել «Դիֆային»»: «(3) Ահաբեկչության ենթարկել (Կովկասի) կառավարչության և դատարանների ներկայացուցիչներին»:

Համագումարը «Դիֆայիի» գլխավոր խնդիրը համարեց Ղարաբաղի հայաթափումը: Այդ նպատակին հասնելու համար ընդունվեց որոշում. «(4) *Բաքվի մուսուլման կապիտալիստների օգնությամբ հայերից գնել Ղարաբաղի բոլոր հողերը՝ դրանք բացառապես մուսուլմաններով բնակեցնելու համար»: «(5) Պարտադրել շուշեցիներին (մուսուլման) անպայման ապրել Շուշիում, Ղարաբաղը վերածել մուսուլմանական պրովինցիայի»:*

НАЧАЛЬНИКЪ
ОДЕССКАГО
ОХРАННАГО ОТДѢЛЕНІЯ.

ОСОБЫЙ ОТДѢЛЪ
СЕКРЕТНЫЙ ЖУРНАЛЪ
«8» Августа 1909 г.
№ 1419

Лично
Совершенно - Секретно

247

3° Августа 1909 года
№ 217

Ваше Превосходительство,
Милостивый Государь.

Гор. Одесса

стоялся съѣздъ представителей мусульманскаго населенія Закавказья, Сѣвернаго Кавказа и Крыма для разработки нѣкоторыхъ тактическихъ и программныхъ вопросовъ.- На означенномъ съѣздѣ было, между прочимъ, постановлено:

1| Устроить въ недалекомъ будущемъ такой же съѣздъ въ Крыму, въ цѣляхъ учрежденія всеобщаго мусульманскаго союза, на подобіе армянскаго "Дашнакцутюна" и посредствомъ террора добиться уступокъ со стороны правительства, какъ того добилась названная армянская организація;

2| противоставить съ весны 1907 г. въ Карабагѣ |Шушинскій уѣздъ| "Дфай" армянскимъ "хумбамъ";

3| терроризировать представителей администраціи и судовъ;

4| при помощи Бакинскихъ капиталистовъ-мусульманъ выкупить у армянъ всѣ земли отъ Агдама до станціи Ханкамъ, для заселенія исключительно мусульманами,

и 5| принудить шушинцевъ хотъ обязательно въ Шушѣ и вообще, сдѣлать Карабагъ мусульманской провинціей.

Послѣ означеннаго съѣзда партія "Дфай" стала дѣятельно развивать пропаганду своихъ идей среди мусульманъ и занялась организаціей новыхъ отдѣленій. Вскорѣ, кромѣ функціонировавшихъ ранѣе комитета въ гор. Баку, который являлся центральнымъ, въ Шушѣ - главнаго для Карабага и отдѣленій въ с. Агдамѣ и Бардахѣ, были учреждены еще

Կուսակցության ակտիվիստներից ստեղծվեց «Ղարաբաղի կոմիտե»: Համագումարի ընդունած որոշումները մուսուլմանական զանգվածներին հասցնելու համար «Ղարաբաղի կոմիտեն» «1907 թ. հոկտեմբերին մշակեց ծրագիր բացառապես հասարակ ժողովրդի համար ...», տեղերում ստեղծեց իր խմբերը և լայն աշխատանք ծավալեց համագումարի որոշումները կյանքի կոչելու համար: Այդ գործունեության հետևանքները շուտով իրենց զգացնել տվեցին: Վերը նշված փաստաթուղթը վկայում է, որ մուսուլմանական զանգվածները «կառավարական իշխանություններին որևէ պահանջ ներկայացնելուց առաջ դիմում էին «Ղարաբաղի կոմիտեին»՝ ցուցում ստանալու համար: Կոմիտեի որոշումներին նրանք ենթարկվում էին անառարկելի» (ЦГАОР, ф, ДП, ОО, 102, оп. 1909 г, ед, хр. 14, л. 282б (36-38))):

Այդ կոմիտեն Ղարաբաղում ապրող քոչվորների միջոցով փակել էր Շուշի-Եվլախ խճուղին, որով հայերը ստանում էին առաջին անհրաժեշտության ապրանքները:

Ցարական հետախուզական կազմակերպությունների կողմից Ղարաբաղում 1905-1906 թթ. տիրած դրության մասին կազմած մի այլ փաստաթղթում նշվում է, որ «թաթարների խավարամիտ և ֆանատիկ բնակչությունը խոր ատելությամբ է նայում հայերի վրա... Այդ ատելությունը թանձրանում է նրանով, որ իրենց երեկվա ստրուկներ-հայերը դարձել են Կովկասում ռուսական տիրապետության անսասանության ամուր հենարաններից մեկը»: Փաստաթղթում նշվում է, որ Ղարաբաղում բնակչության մեծամասնությունը կազմող այդ «երեկվա ստրուկներ»՝ հայերն են կառուցել «հոյակապ գործարանները... առևտրական բոլոր ձեռնարկությունները», իսկ կուլտուր-լուսավորական ասպարեզում «հայերը չափազանց առաջ են անցել» թաթարներից: Փաստաթուղթը վկայում է, որ հայ-ադրբեջանական հակամարտությունը հրահրվում էր տարածաշրջանում վխտող «թուրքական շատ գործակալների կողմից», որոնք «պանիսլամիզմի և պանթուրքիզմի վարակ են տարածում» (ЦГИА СССР (Ленинград), ф. 857, оп. 1, д. 1272, л. 48, 49):

«Դիֆայիին» և նրա «ժառանգներին» այնուամենայնիվ չհաջողվեց իրագործել թուրքական գործակալների առաջադրած ծրագրերը: Ղարաբաղի հայերը հայրենի հողերը չվաճառեցին թուրքերին, Ղարաբաղը չվերածվեց «մուսուլմանական պրովինցիայի»: Սակայն ամբողջ 20-րդ դարի ընթացքում տարբեր գունավորումներով հանդես եկած «դիֆայիականները» («Մուդաֆիէ» («Պաշտպանություն), «Իտտիհաթ» («Միություն»), «Մուսավաթ», «Նիջատ» («Փրկություն»), ադրբեջանական «բոլշևիկներ» և այլն) իրենց կազմակերպական գոյության ամբողջ ընթացքում շարունակեցին պայքարը Ղարաբաղը հայաթափելու և այն «մուսուլմանական պրովինցիայի» վերածելու համար: Այդ պայքարը տարբեր փուլերում տարբեր երանգներ ստացավ, սակայն չկորցրեց առաջնաստեղծ իր էությունը:

21-րդ դարի շեմին արցախահայության ազատագրական պայքարի հետևանքով Ղարաբաղը (Արցախը) անկախացավ: Նրան տիրելու համար այսօրվա Ադրբեջանը և նրա հովանավորները շարունակում են պայքարել: Սակայն անկախացած Ղարաբաղը ետ դարձի ճանապարհ չունի: Այն «վաճառքի» առարկա չի կարող լինել:

Академик Г. А. Галоян

Как азербайджанцы программировали "купить все земли Карабаха"

В 1906 г., когда по известным причинам ослабевали позиции России на Кавказе, в Бакинской и Елисаветпольской губерниях по инициативе турецких агентов была создана мусульманская партия "Кавказский всемусульманский союз Дифаи" ("Защитник"). В марте 1907 г. по инициативе этой партии в Елисаветполе состоялся съезд мусульманского населения Закавказья, Северного Кавказа и Крыма. Съезд, как свидетельствуют архивные документы, постановил: созвать новый съезд для создания Всеобщего мусульманского союза России; терроризировать представителей администрации и судов; "при помощи бакинских капиталистов-мусульман купить у армян все земли Карабаха для заселения исключительно мусульманами"; "принудить шушинцев-[мусульман] жить обязательно в Шуше, сделать Карабах мусульманской провинцией". Для выполнения этих задач был создан "Карабахский комитет", который стал террористическим центром "Дифаи", организовал убийство генерал-губернатора Карабаха и многих других. Однаки армяне, составлявшие большинство населения Карабаха, не дали превратить свою Родину в предмет торга.

Academician G. A. Galoyan

The Way the Azerbaijanis Were Planning "to buy the whole Karabagh area"

In 1906, when the position of Russia in the Caucasus became reduced by known reasons, in Baku and Elisavetpol provinces there had been formed a Moslem party on Turkish agents initiative: The Caucasian Pan-Mussulman Union "Difai" ("Defender"). The meeting of the Moslem population from the Transcaucasus, North Caucasus and the Crimea was held on that party initiative in March 1907. According to archive documents the Meeting resolved to make a new call for the following issues: to establish the Pan-Mussulman Union of Russia, to terrorize the representatives of the administration of the ships; with the help of Moslem capitalists in Baku to manage buying of Karabagh area at the Armenians for inhabiting only by the Moslems, to obligate Shushi population (for the Moslem ones) to live in Shushi only; to make Karabagh as a Mussulman province. For the realization of those tasks there had been established a "Karabagh Committee", which became a terrorism center for "Difai", and organized killing of general-governor, and many others in Karabagh province. While the Armenians, being the majority of Karabagh population, protected it from being a sale product.